



Հաստատված է՝
ՀՀ փաստաբանների պալատի խորհրդին առընթեր Գիտա-վերլուծական
կենտրոնի խորհրդի 29.02.2012 թ. թիվ 4-Ա որոշմամբ

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
№ 04-12-Ա

29.02.2012 թ.

ք.Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտա-վերլուծական կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) խորհուրդը, մասնակցությամբ համակարգող Արա Ջոհրաբյանի, քարտուղար Իրինա Փիլոյանի, նորմատիվ իրավական ակտերի փորձաքննության հարցերի հանձնաժողովի նախագահ Գևորգ Գյոզալյանի և Պալատի ներքին իրավական ակտերի փորձաքննության հարցերի հանձնաժողովի նախագահ Լիլիթ Գրիգորյանի,*

քննարկելով ՀՀ սահմանադրական դատարանում քննության ընդունված «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ (այսուհետ՝ Դիմող) դիմումի հիման վրա՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 12-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

հաստատում է սույն եզրակացությունը հետևյալի մասին.

I. Եզրակացության համար էական նշանակություն ունեցող փաստերի համառոտ շարադրանքը.

1) Դիմողը 10.02.2012 թվականին հարցում է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն), խնդրելով տրամադրել տեղեկատվություն 2009 թվականի ընթացքում ՀՀ զինված ուժերում ծառայության ընթացքում մահացած ժամկետային և պայմանագրային զինծառայողների թվի վերաբերյալ, ինչպես նաև՝ հայտնել նրանց անունները, ազգանունները և հասցեները:

* Կենտրոնի խորհրդի սահմանադրական արդարադատության հարցերի հանձնաժողովի նախագահը չի մասնակցել սույն հարցի քննարկմանը և քվեարկությանը:

2) Նախարարությունն ի պատասխան Դիմողի հարցմանը հայտնել է, որ պահանջվող տեղեկատվությունը ՀՀ պաշտպանության նախարարի համապատասխան գաղտնի հրամանով գործողության մեջ դրված «ՀՀ պաշտպանության նախարարության գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկի» համաձայն՝ հանդիսանում է գաղտնի տեղեկատվություն և «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ համարվում է ծառայողական գաղտնիք: Նախարարությունը ելնելով վերոգրյալից «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների հիման վրա մերժել է Դիմողին տեղեկատվության տրամադրումը:

3) Դիմողը 27.02.2010 թվականին Նախարարություն է դիմել նոր հարցմամբ, որով խնդրել է իրեն տրամադրել ՀՀ պաշտպանության նախարարի համապատասխան գաղտնի հրամանը (որով գործողության մեջ է դրվել «ՀՀ պաշտպանության նախարարության գաղտնագրման ենթակա տեղեկատվությունների ընդլայնված գերատեսչական ցանկը»), ինչպես նաև՝ «ՀՀ պաշտպանության նախարարության գաղտնագրման ենթակա տեղեկատվությունների ընդլայնված գերատեսչական ցանկը»:

4) Նախարարությունը մերժել է տրամադրել պահանջվող տեղեկատվությունը, պատճառաբանելով, որ այն հանդիսանում է պետական գաղտնիք:

5) Դիմողը 19.04.2010թ. հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ ընդդեմ Նախարարության՝ Դիմողի տեղեկատվության ազատության իրավունքի խախտման փաստը ճանաչելու, Նախարարության գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկի մասին հրամանը վերացնելու և Նախարարությանը 10.02.2010թ. հարցումով փնտրվող տեղեկությունը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

6) Գործի քննությունն անց է կացվել դռնփակ կարգով:

7) Վարչական դատարանը թիվ ՎԴ/1314/05/10 գործով 23.11.2010թ վճռով (այսուհետ՝ Վճիռ) մերժվել է հայցը:

8) Դիմողը Վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացվել Վարչական վերաքննիչ դատարան:

9) Վարչական վերաքննիչ դատարանը 16.03.2011թ. որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) մերժել է Դիմողի վերաքննիչ բողոքը:

10) Դիմողի կողմից Որոշման դեմ 15.04.2011 թ. վճռաբեկ բողոք է ներկայացվել Վճռաբեկ դատարան:

11) Վճռաբեկ դատարանը 18.05.2011 թ. կայացրել է «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշում:

II. Դիմողի խնդրանքը.

Դիմողը ՀՀ սահմանադրական դատարանից խնդրել է ՀՀ Սահմանադրության 3, 5, 6, 27 և 43, 83.5, 117-րդ հոդվածին հակասող և անվավեր ճանաչել «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի «գ» ենթակետի, 12-րդ հոդվածների 6-րդ և 7-րդ մասերի

դրույթները (այսուհետ՝ Վիճարկվող նորմեր):

III. Վիճարկվող նորմի շարադրանքը.

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) «Տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու և դրանց պաշտպանության բնագավառում պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց լիազորությունները» վերտառությամբ 8-րդ հոդվածի 4-րդ մասի «գ» ենթակետը սահմանում է՝

4. Հանրապետական գործադիր, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները՝

գ) իրենց իրավասության սահմաններում իրականացնում են տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու և դրանց պաշտպանության բնագավառում այլ լիազորություններ:

Օրենքի՝ «Տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելը» վերտառությամբ 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերը համապատասխանաբար սահմանում են՝

Պետական այն մարմինները, որոնց ղեկավարներն օժտված են տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու լիազորություններով, մշակում են գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերը, որոնցում ներգրավվում են՝

ա) պետական գաղտնիքի շարքին դասվող այն տեղեկությունները, որոնք տնօրինելու լիազորությամբ օժտված են իրենք.

բ) ծառայողական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունները:

Գերատեսչական ցանկերում նշվում են նաև ներգրավված տեղեկություններից յուրաքանչյուրի գաղտնիության աստիճանը: Այդ ցանկերը և դրանցում կատարվող փոփոխություններն ու լրացումները հաստատվում են պետական մարմինների համապատասխան ղեկավարների կողմից: Գերատեսչական ցանկերը գաղտնագրվում են և հրապարակման ենթակա չեն:

IV. Կենտրոնի իրավական վերլուծությունը.

Կենտրոնը գտնում է, որ Վիճարկվող նորմերն անհրաժեշտ է քննարկել երկու տեսանկյունից՝

ա) տեղեկատվության ազատության իրավունքի իրականացման և

բ) պետական անվտանգության պաշտպանության ապահովման:

1995 թվականի հուլիսի 5-ին ընդունված ՀՀ Մահմանադրության 24-րդ հոդվածը նախատեսում էր կարծիքը պնդելու և խոսքի ազատության յուրաքանչյուրի իրավունքը:

2005 թվականի նոյեմբերի 27-ին տեղի ունեցած սահմանադրական բարեփոխումների արդյունքում առավել ընդլայնվեց տեղեկատվության ազատության իրավունքի՝ որպես մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքի կարգավորման ոլորտը: Մասնավորապես՝ ՀՀ Մահմանադրության 27-րդ

հողվածը սահմանում է. *«Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն:*

Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է:

Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային ռադիոյի և հեռուստատեսության առկայությունը և գործունեությունը:»

Սահմանադրական բարեփոխումների արդյունքում վերոնշյալ հողվածում մարդու իրավունքի ձևով համադրվեցին ժողովրդավարական և իրավական պետության գաղափարախոսական հիմք հանդիսացող երեք սկզբունքներ՝

ա) կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը.

բ) խոսքի ազատության իրավունքը.

գ) տեղեկատվության ազատության իրավունքը.

ՀՀ Սահմանադրությունը նախատեսեց նաև նշված իրավունքի իրացման որոշակի երաշխիքներ՝ կապված լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատության, ինչպես նաև՝ անկախ հանրային ռադիոյի և հեռուստատեսության առկայության և գործունեության հետ:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հողվածի համաձայն՝ տեղեկատվության ազատությունն ապահովվում է տեղեկությունները գրանցելու, դասակարգելու և պահպանելու միասնական կարգի սահմանման, տեղեկություններ փնտրելու և ստանալու ազատության պաշտպանության, տեղեկություններ տրամադրելու մատչելիության ապահովման, հրապարակայնության սկզբունքների հիման վրա:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հողվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է, որ տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հողվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, ***եթե դա պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք...***

ՀՀ Սահմանադրության 43-րդ հողվածը նախատեսում է օրենքով մարդու որոշ իրավունքների, այդ թվում՝ Սահմանադրության 27-րդ հողվածով երաշխավորված իրավունքների սահմանափակման հնարավորություն, այն պարագայում, երբ դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հողվածով թվարկված շահերը, որոնց պաշտպանության համար կարող են սահմանափակվել հողվածում նշված իրավունքները, հանդիսանում են այն ***«օրինական հիմքերը»***, որոնց

առկայության դեպքում իրականացվող սահմանափակումները հետապնդում են իրավաչափ նպատակ:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով նախատեսված սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար «*օրինական հիմք*» հանդիսացող հանգամանքների («անհրաժեշտությունների») շարքը սկսվում է հասարակությունում *պետական անվտանգության պաշտպանության անհրաժեշտությունից*:

Սա հենց այն սահմանադրական դրույթն է, որն իր մեջ ներառում է պետական անվտանգության պաշտպանության չափազանց լայն շրջանակ, որի կարևորագույն տարրն է հանդիսանում պետական գաղտնիք հանդիսացող տեղեկատվության պաշտպանության ոլորտը, չնայած այն հանգամանքին, որ ՀՀ Սահմանադրությունը որևէ հոդվածում ուղղակիորեն չի հիշատակում պետական գաղտնիքի ինստիտուտը:

Հասարակության և պետության անվտանգության պաշտպանության նկատառումներից ելնելով, պետական գաղտնիքի ինստիտուտն ընդունել են բոլոր պետությունները: Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ պետության անվտանգության տեսանկյունից պետական գաղտնիքի հրապարակումը կարող է իրական սպառնալիք պետությունում գործող սահմանադրական կարգի համար:

Ինչպես ՀՀ Սահմանադրությունը, այնպես էլ՝ մի շարք միաջգգային իրավական փաստաթղթեր, երաշխավորելով տեղեկատվության ազատության իրավունքը, նախատեսում են տեղեկատվության այնպիսի շրջանակ, որն օժտված է սահմանափակ մատչելիությամբ: Նման տեղեկատվության շարքին առաջին հերթին դասվում է պետական գաղտնիք պարունակող տեղեկատվությունը:

Պետական գաղտնիք կազմող տեղեկատվության պաշտպանությունն իրականացվում է նաև քրեաիրավական միջոցներով: Մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունները բաժնում ընդրկված են սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները, որոնց շարքին են դասվում պետական դավաճանությունը (հոդված 299), լրտեսությունը (հոդված 302), պետական գաղտնիքը հրապարկելը (հոդված 306), պետական գաղտնիք պարունակող փաստաթղթերի կամ համակարգչային տեղեկատվության հետ վարվելու կանոնները խախտելը (հոդված 307):

Հայաստանի Հանրապետության անվտանգության (քաղաքացիների, հանրության և պետության կենսական կարևոր շահերի) ապահովման նպատակով որոշակի բնագավառի տեղեկություններ պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու, գաղտնագերծելու և պաշտպանելու կապակցությամբ ծագող հարաբերությունների, պետական և ծառայողական գաղտնիք հասկացությունների, գաղտնիության աստիճանների սահմանման, գաղտնիք կազմող տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու, պահպանելու, գաղտնագերծելու, օգտագործելու իրավական հիմքերը, պետական և ծառայողական գաղտնիքին առնչվող հարաբերություններում պետական մարմինների լիազորությունների

իրավական կարգավորումն իրականացվում է 1996 թվականի դեկտեմբերի 3-ին ընդունված «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ նաև Օրենք):

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ *պետական գաղտնիքը Հայաստանի Հանրապետության ռազմական, արտաքին հարաբերությունների, տնտեսական, գիտատեխնիկական, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության բնագավառների այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պետության կողմից, և որոնց տարածումը կարող է ծանր հետևանքներ առաջացնել Հայաստանի Հանրապետության անվտանգության համար:*

Նույն հոդվածի 2-րդ պարբերությունը տալիս է ծառայողական գաղտնիքի հասկացությունը, համաձայն որի՝ *ծառայողական գաղտնիքը սույն հոդվածի առաջին մասով նախատեսված բնագավառների այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պետության կողմից, և որոնց տարածումը կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության անվտանգությանը: Այդպիսի տեղեկությունները, որպես կանոն, պարունակում են պետական գաղտնիքի մաս կազմող տվյալներ, սակայն ինքնին չեն բացահայտում պետական գաղտնիքը:*

Պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունները համարվում են Հայաստանի Հանրապետության սեփականությունն ու պահպանվում ու պաշտպանվում են պետության կողմից:

Օրենքի 9-րդ հոդվածը պետական գաղտնիք հանդիսացող տեղեկատվության ոլորտներին համապատասխան, սահմանում է այն տեղեկատվությունների շարքը, որոնք դասվում են պետական կամ ծառայողական գաղտնիքի շարքին:

Գախված գաղտնի տեղեկությունների կարևորությունից, բնույթից և դրանց պաշտպանության համար անհրաժեշտ միջոցների ծավալից, գոյություն ունի պետական գաղտնիքի երեք աստիճան՝ գաղտնի, հույժ գաղտնի և հատուկ կարևորության: Գաղտնիության աստիճաններին համապատասխան գաղտնիք համարվող փաստաթղթերի վրա դրվում են «գաղտնի», «հույժ գաղտնի» և «հատուկ կարևորության» մակագրությունները (գրիֆերը):

Կենտրոնը գտնում է, որ ցանկացած պարագայում պետական կամ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկատվության կրողն ինքն է պարտավոր ապացուցել այն փաստը, որ տվյալ տեղեկատվության հրապարակմամբ իսկապես կարող է էական վնաս պատճառվել օրենքով պահպանվող հանրային կամ պետական շահերին:

Այլ կերպ կարելի է ասել, որ գործում է այսպես կոչված «տեղեկատվության բաց և մատչելի լինելու կանխավարկածը», եթե դրա գաղտնիությունը, հետևաբար՝ դրա հրապարակման վտանգավոր լինելու հանգամանքն ապացուցված չէ: Տվյալ պարագայում կարևորվում է այն հանգամանքը, թե արդյո՞ք այդ տեղեկատվության հրապարակումն ավելի մեծ օգուտ չի տա հասարակությանը, քան այն գաղտնի պահելը:

Կենտրոնը կարևորում է այն հարցը, թե արդյո՞ք Վիճարկվող նորմը օրենքով տեղեկատվությունը պետական կամ ծառայողական գաղտնիքի շարքին դասելու և դրանց պաշտպանության բնագավառում պետական մարմինների և

պաշտոնատար անձանց լիազորությունները սահմանելու հարցում չարաշահումների տեղիք չի տալիս:

Կենտրոնը ցանկանում է ուշադրության արժանացնել այն հանգամանքը, որ Օրենքը տարբերակում է **«պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունների ցանկ»** և **«գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկ»** հասկացությունները:

Նշված հասկացությունների բովանդակությունը բացահայտելու համար անհրաժեշտ է վերլուծել Օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված տեղեկությունները պետական կամ ծառայողական գաղտնիքի շարքին դասելու կարգը:

Նշված 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելն իրականացվում է ըստ դրանց բնագավառի կամ գերատեսչական պատկանելիության:

Գաղտնագրման սկզբունքներին (օրինականություն, հիմնավորվածություն և ժամանակին կատարում) համապատասխան՝ տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու անհրաժեշտության հիմնավորումը դրվում է պետական այլ մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների վրա, որոնք ստացել (մշակել) են այդ տեղեկությունները:

Նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ *Հայաստանի Հանրապետության պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունների ցանկը վավերացվում է Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից, վերանայվում է անհրաժեշտության դեպքում և ենթակա է հրապարակման:*

Պետական այն մարմինները, որոնց ղեկավարներն օժտված են տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու լիազորություններով, մշակում են գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերը, որոնցում ներգրավվում են՝

ա) պետական գաղտնիքի շարքին դասվող այն տեղեկությունները, որոնք տնօրինելու լիազորությամբ օժտված են իրենք:

բ) ծառայողական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունները:

Գերատեսչական ցանկերում նշվում են նաև ներգրավված տեղեկություններից յուրաքանչյուրի գաղտնիության աստիճանը: Այդ ցանկերը և դրանցում կատարվող փոփոխություններն ու լրացումները հաստատվում են պետական մարմինների համապատասխան ղեկավարների կողմից: Գերատեսչական ցանկերը գաղտնագրվում են և հրապարակման ենթակա չեն:

Օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ պարբերությամբ նախատեսված իրավական նորմից պարզ է դառնում, որ **պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունների ցանկն** այն տեղեկությունն է, որը մատչելի է հանրության համար, քանի որ նշված ցանկը վավերացվում է ՀՀ Նախագահի կողմից և ենթակա է հրապարակման: Հանրապետության Նախագահի կողմից վավերացվող ցանկի հիման վրա տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու լիազորություններով օժտված պետական մարմինների կողմից մշակվող և **գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերը** դասվում են պետական գաղտնիքի շարքին, քանի որ դրանք իրենց մեջ ներառում են

պետական, ինչպես նաև՝ ծառայողական գաղտնիքի շարքին դասվող այն տեղեկությունները, որոնք տնօրինելու լիազորությամբ օժտված են իրենք:

Այլ կերպ ասած, *ընդլայնված գերատեսչական ցանկերն* առավել ծավալուն են և պարունակում են գաղտնիք հանդիսացող տեղեկություններ: Ընդլայնված գերատեսչական ցանկերի առկայությունը պայմանավորված է նաև այդ տեղեկությունները չհրապարակելու պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց կամ քաղաքացիների կողմից նշված տեղեկությունները չհրապարակելու արգելքի հստակ իմացության համար:

Օրինակ, Օրենքի 9-րդ հոդվածը ռազմական բնագավառում տալիս է գաղտնիք պարունակող տեղեկությունների սահմանը՝ գորակոչային պահեստագործի ստեղծման ու օգտագործման վերաբերյալ փաստաթղթերի բովանդակության մասին:

Որպեսզի ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակիցն իմանա, թե գորակոչային պահեստագործի ստեղծման ու օգտագործման վերաբերյալ որ փաստաթղթի բովանդակությունն է պետական գաղտնիք, ՀՀ պաշտպանության նախարարը պետք է համապատասխան ընդլայնված գերատեսչական ցանկ սահմանի:

Կենտրոնը հարկ է համարում արձանագրել, հետևյալ մտահոգությունը:

Հաշվի առնելով այն, որ ՀՀ գործող օրենսդրության համաձայն պետական գաղտնիք կազմող տեղեկատվությունը դուրս է որևէ վերահսկողությունից, ապա նման հանգամանքը տեղեկատվությունը պետական գաղտնիքի շարքին դասող մարմինների կողմից իրենց լիազորությունների սահմանազանցման տեղիք կարող է տալ, քանի որ տեղեկատվությունը պետական կամ ծառայողական գաղտնիքի շարքին դասելու իրավասություն ունեցող պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք կարող են կամայականորեն գաղտնագրել ցանկացած այլ տեղեկատվություն, որը սույն օրենքի իմաստով իր մեջ չի պարունակում պետական կամ ծառայողական գաղտնիք: Նկատի ունենալով այն, որ իրավակիրառական պրակտիկայում ընդլայնված գերատեսչական ցանկը հաստատող հրամանն էլ է համարվում գաղտնիք, ապա որևէ կերպ հնարավոր չէ դատական կարգով վիճարկել այդ հրամանը և համապատասխան մարմնի հնարավոր բացասական վարքագիծը ստուգել:

Կենտրոնը գտնում է, որ Դիմող կողմը ահագանգել է հենց այս խնդիրը, ինչը Օրենքով կամ այլ իրավական ակտերով լուծված չէ:

Այսպիսով՝ վերլուծելով խնդրո առարկա հանդիսացող վիճարկվող նորմերը, Կենտրոնը եկավ այն եզրահանգման, որ տվյալ պարագայում ստացվում է այնպես, որ երկու՝ սահմանադրորեն երաշխավորված և պաշտպանության ենթակա շահեր բախման մեջ են գտնվում, և նման բախման վերացման միակ իրավական միջոցը բախվող արժեքների (շահերի) միջև ներդաշնակության և հավասարակշռության ապահովումն է, ինչը հնարավոր է կյանքի կոչել միայն ՀՀ Մահմանադրությամբ և այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված սահմանափակումների միջոցով:

V. Կենտրոնի եզրահանգումը.

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնի խորհուրդը գտնում է, որ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 12-րդ հոդվածներով նախատեսված դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրության 3-րդ, 5-րդ, 6-րդ, 27-րդ, 43-րդ, 83.5 և 117-րդ հոդվածներին՝ սույն եզրակացության մեջ տրված իրավական մեկնաբանման շրջանակներում:

Համակարգող՝

Արա Զոհրաբյան

քարտուղար՝

Իրինա Փիլոյան